

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 46/2

6 նոյեմբերի 2012թ.

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 23.10.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Էմմա Վարդանյանի 11.10.2012թ-ի դիմումով բերված գանգատը «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 17.10.2012թ. թիվ 2117843 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 25.09.2012թ. թիվ 2210407 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Էմմա Վարդանյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 03.10.2012թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2210407 արձանագրությունը, որով մասնավորապես արձանագրվել է.

հարկային տեսուչ Գևորգ Ղահրամանյանի կողմից Ա/Ձ Էմմա Վարդանյանին պատկանող ք.Երևան, Ներսիսյան 8-18 հասցեում գտնվող ատամնաբուժարանում 03.10.2012թ-ին ժամը 15:00-ին կատարվեց հսկիչ գնում 10.000 դրամի չափով՝ կանխավճար ծառայության համար (ներքին ծնոտի պրոթեզի պատվեր), որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ատամնաբույժ Հարություն Վերդյանի կողմից գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ուսումնասիրությունն անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 15:11-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 0 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 10.000 դրամը ժամը 15:11-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 15:11-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 10.000 դրամ ընդհանուր գումարով:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» «Օրենքով սահմանված կարգով:

Որից հետո, համաձայն «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 09.10.2012թ. թիվ 2117843 հանձնարարագրի, «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Էմմա Վարդանյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 18.09.2007թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 17.10.2012թ-ին կազմվել է թիվ 2117843 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտի մոտ «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 25.09.2012թ-ին թիվ 2210407 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված թիվ 2210407 արձանագրությունը, որով արձանագրվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջների խախտման փաստը և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» «Օրենքի և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» «Օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով տնտեսվարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» «Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Էմմա Վարդանյանի գանգատում մասնավորապես նշված է.

03.10.2012 թ-ին Արաբկիրի ՀՏ տեսուչ Խ.Փանոսյանը ժամը 16-ի մոտակայքում ինձ հրավիրել է Հր.Ներսիսյան 8-18 տարածքում գտնվող ատամնաբուժարան, որտեղ իրականացվում է իմ գործունեությունը՝ ծանոթանալու ՀՀ ԿԱ ՊԵԿ թիվ 2210407 հանձնարարագրին: Հանձնարարագրին ծանոթացնելու համար ներկա է եղել միայն հիշատակված տեսուչը՝ ոմն Արսենի հետ, որի անունը հանձնարարագրում չկար, իսկ հանձնարարագրում նշված տեսուչներ Գ.Ղահրամանյանը և Ռ.Գավուրմաջյանը ընդհանրապես չեն ներկայացել: Խ.Փանոսյանը պնդում էր, որ տեսուչ Գ.Ղահրամանյանին կլինիկայում պրոթեզավորման կոնսուլտացիա ծառայություն է մատուցվել, որի դիմաց վճարում է կատարվել, իսկ ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Այնուհետև Խ. Փանոսյանը, առանց հանձնարարագրում նշված մյուս տեսուչների և հատկապես առանց Գ.Ղահրամանյանի, ով պետք է փաստեր կատարվածը, կազմեցին արձանագրություն՝ իր մեկնաբանությամբ, որն իհարկե չստորագրեցին իմ աշխատակիցները: Այդ պատճառով ես համաձայն չեմ կազմված արձանագրության հետ և չեմ ստորագրել այն:

Բժիշկ-ստոմատոլոգ Հ.Վերդյանը և բուժքույր Ա.Մարտիրոսյանը, որոնք պատասխանատու են հաճախորդների հաշվառման համար, պնդում են, որ մինչ իմ կլինիկա գալը ոչ մի հաճախորդ չի սպասարկվել: Միայն մեկ հաճախորդի կոնսուլտացիա է արվել, որը մեզ մոտ անվճար է: Կլինիկայում, որը ունի 30 ք/մ տարածք, հնարավոր չէ պրոթեզավորում իրականացնել, քանի որ դրա համար հարկավոր են հատուկ պայմաններ: Մեզ մոտ հաճախորդին միայն անվճար կոնսուլտացիա է արվում և խորհուրդ է տրվում դիմել համապատասխան կլինիկաներ: Ցանկության դեպքում բուժման և հեռացման ծառայությունները ստանում են մեր կլինիկայում: Ես իմ աշխատողներին չվստահելու հիմքեր չունեմ, որովհետև երկար ժամանակ աշխատում են իմ կլինիկայում, ճանաչում են նրանց և ոչ մի խախտման դեպք չեմ նկատել:

Ելնելով վերոգրյալից՝ Արաբկիրի ՀՏ տեսուչներն իրականացրել են ոչ ճիշտ ստուգում և գրանցել են իրականությանը չհամապատասխանող խախտում:

Ա/Ձ Էմմա Վարդանյանը խնդրում է ուսումնասիրել խնդիրը և հարցին տալ արդար լուծում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Էմմա Վարդանյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ դիմումով բերված գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ հսկիչ գնումն իրականացնելու ընթացքում Ա/Ձ Էմմա Վարդանյանը ներկա չի գտնվել, հետևապես վերջինիս պնդումները՝ արձանագրված խախտումը տեղի չունենալու վերաբերյալ, ըստ էության, չեն կարող հիմնավոր համարվել:

Հարկային տեսուչ Գևորգ Ղահրամանյանը պնդեց, որ իր կողմից Ա/Ձ Էմմա Վարդանյանին պատկանող ք.Երևան, Ներսիսյան 8-18 հասցեում գտնվող ատամնաբուժարանում 03.10.2012թ-ին, ժամը 15:00-ին կատարվել է հսկիչ գնում՝ կատարվել է ներքին ծնոտի պրոթեզի պատվեր, որի դիմաց որպես կանխավճար կանխիկ տրվել է 10.000 դրամ: Նշված ծառայության ընդհանուր արժեքը կազմել է 40.000 դրամ: Կատարված պատվերի և վճարված գումարի վերաբերյալ տվյալները գրանցվել են ատամնաբուժարանում գտնվող համապատասխան տետրում: Ատամնաբույժ Հարություն Վերդյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Որից հետո, իրականացված համապատասխան գործողություններով հիմնավորվել է տրված կանխավճարի դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, ժամը 15:11-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել <Z> հաշվետվությունը՝ 0 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել, կատարված վճարման արժեքը՝ 10.000 դրամը ժամը 15:11-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 15:11-ին նորից դուրս է բերվել <Z> հաշվետվություն:

<Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն. <Սույն օրենքով սահմանված պատասխանատվության կիրառման համար հիմք է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտումը>:

<Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի>:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտով <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ